ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ 1947 № 8 *Общественные науки*

Ս. ԵՐԵՄՅԱՆ

ԼԻՊԱՐԻՏ ԶՈՐԱՎԱՐԻ ՀԱՋՈՐԴՆԵՐԸ ԵՎ ԴԱՆԻՇՄԱՆՅԱՆ ՏՈՀՄԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Ներկա ուսումնասիրությունը շարունակությունն է հանդիսանում «Լիպարիտ զորավարը և նրա նախորդները» աշխատության,[1] ուստի այստեղ կանգ չենք առնի այն խնդրի վրա, թե ովքեր էին Լեպարիտյանները և հատկապես Իվանե Լիպարիտյանը: Այս հարցերով հետաքրքրվողները կարող են ծանոթանալ հիշյալ աշխատությանը:

Մեծ Լիպարիտի գերությունից հետո, 1058 թ.,[2] նրա որդիներից մեկը Իվանեն, գնում է Կոստանդնուպոլիս, որտեղ նոր էր գահ բարձրացել Իսահակ Կոմնենոս կայսրը (1057—1059), որը նրան առնում է իր հովանավորության ներքո և մի շարք կալվածներ է պարգևում բուն Հայաստանում: Բյուզանդացիները, Արիստակես Լաստիվերտցու վկայությամբ, Իվանե Լիպարիտյանին «տուեալ էին ի պարգևի՝ տեղիս բնակութեան զմեծ աւանն Երիզայ ի գաւառին Հաշտենից, և որ շուրջ զնովաւ դաստակերտք»:[3] Նույնը հաղորդում է բյուզանդացի ժամանակագիր Ատտալիատեսը:[4] Միայն վերջինս Հաշտենից գավառի Երիզան շփոթում է Եկեղյաց գավառի Երիզայի հետ, որը իր ժամանակ կոչվում էր Երզնկա, ուստի հաղորդում է, թե բյուզանդացիներն Իվանեին իշխան հաստատեցին Եփրատի վրա գտնվող Երզնկայում:[5] Նույն 1058 թվին, երբ Իվանեն ստացավ այս կալվածները, նա նվիրատվություն է բերում մի վանքի:[6]

Իվանե Լիպարիտյանը, սակայն, սրանով չի բավարարվում: Իսահակ Կոմնենոսի գահընկեցությունից հետո, օգտվելով կայսրության մեջ ծագած գահակալական կռիվներից, երբ լսում է, որ բյուզանդական «թագաւորութիւնն յերկուս բաժանեալ է, գնաց և խարանօք էառ զամուրն Եղանց բերդ կոչեցեալ, և արարեալ զայն ընդ իւրով ձեռամբ՝ դառնայ անդրէն ի գաւառն Ագորի, և յամուրն որ կոչի Հաւաձիչ. և բարեկամարար ել քաղաքն ընդ առաջ նորա»: Այնուհետև Իվանեն փորձում է տիրանալ «ամուր քաղաքին Կարնոյ»: Սկզբում նա փորձում է խաբեությամբ վերցնել քաղաքը, «ասելով թէ ի թագաւորէն հրաման ունիմ, իմ է քաղաքդ, բացէք զդրունս զի մտից»: Սակայն քաղաքացիներն ուշադրություն չեն դարձնում, ուստի Իվանեն «մարտ եղեալ, պատերազմաւ կամէր տիրել քաղաքին»:[7] Երբ զրու-

[1] Տե՛ս Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ, № 2, Երևան, 1947 թ., էջ 103—149:

[2] Անդ, էջ 142—143:

[3] Արիստակէս Լաստիվերտցի—Պատմութիւն, գլ. ԺԸ, Թիֆլիս, 1912, էջ 123:

[4] Տե՛ս Արշակ Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո հատ. Ա. Կահիրե, 1937, էջ 437: Տես նաև Վ. Տոմաշեկ—Սասուն և Տիգրիսի ակունքների սահմանները, Վիեննա, 1896, էջ 41:

[5] Արշակ Ալպոյաճյան, անդ, էջ 485:

[6] Е. Такайшвили, Зап. Вост. Отд. Русск. Арх. Об-ва, 1896, 59.

[7] Ա. Լաստիվերտցի, էջ 123—124:

թյունը սպառնալից դարձավ՝ Կարինի կառավարիչը դիմեց Անիի կատապանին. «որը ունէր զպատիւ մագիստրոսութեան», որ, անշուշտ, մագիստրոս և Անեցի կատապան Բագրատ Վխկացին է։[1] Վերջինս շտապում է զորք ուղարկել Իվանեի դեմ։ Երբ Իվանեն տեղեկացավ, որ իր դեմ զորք է ուղարկված, «ապստամբեալ առ զերկիրն և դարձաւ ի տեղի իւր»։ Մենախնդիր իշխանը սրանով չբավարարվելով, դիմում է սելջուկներին, որպեսզի նրանք տան «զօրս յօգնականութիւն իւր»։ Պատմագրի ասելով, «այս եղև սկիզբն անհնարին չարեացս, որ անց ընդ մեզ»։[2] Այդպիսով, Տոմաշեկի խոսքերով ասած, «Իվանե վստահելի անձ չըլլալով՝ քիչ ժամանակ հառաջ թոթափած էր յուր վրայեն հպատակության (vassal) լուծը և միացած էր հիմա Տաճկաց հետ, որոնց ավարառու խմբերուն գլուխն անցած՝ Օխթիս ու Ճանիթ առաջնորդեց»։[3] Այս դեպքը նախորդեց սելջուկների հերթական արշավանքին։ Իվանեն, իբրև կայսրության դեմ ապստամբող, ուրախությամբ էր միանում սելջուկներին, սակայն, երբ տեսավ բարբարոս ավերիչների բազմությունը, «զղջացաւ և կամեցաւ ի մեծ ամուրն ամրանալ»։ Սելջուկները տեսնելով Իվանեին սարսափահար, երաշխավորություն են տալիս և, պատմագրի ասելով, միայն դիմում են նրան հետևյալ պահանջով՝ «մեզ ճանապարհ ցոյց տուր, զմեզ դատարկ մի դարձուցաներ»։ Իվանեն «անճարեալ, տայ նոցա առաջնորդ յուրայնոցն»։[4] Ըստ երևույթին, այս առաջնորդը իր որդիներից մեկն էր, որը թուրք սելջուկ ասպատակողներին հասցնում է մինչև Թադուիք ու Ճանեթ, մինչև Արևմտյան Վրաստանի սահմանները, «եւ արարեալ անչափ առ և գերի, դարձան մեծաւ յաղթութեամբ»։[5] «Իսկ իւրեանց առաջնորդին «մեծատուր պարգեօք շնորհակալիս մատուցին», «վասն ճանապարհի յաջողութեանն որ պատահեաց նոցա»։[6]

Նույն 1058 թվին սելջուկները,[7] Աբու-Դինար ամիրայի գլխավորությամբ, ձեռնարկեցին մի նոր արշավանք, այս անգամ հարուստ և փարթամ Մելիտինե քաղաքի վրա։ Մատթեոս Ուռհայեցու տեղեկության համաձայն, «եղև առաջնորդ զօրացն անօրինաց որդին Լիպարիտի միաբանեալ ընդ նոսա»։

Արդ, հարց է ծագում, թե ով կարող էր լինել «որդին Լիպարիտի»։ Մենք տեսանք, որ Լիպարիտ Լիպարիտյանն իր հիշատակարաններից մեկում հիշում է իր երեք որդիներին՝ Ռատ, Իվանե և Նիանիա։ Վերջին երկուսը հիշվում են վրաց և հայ աղբյուրներում, բայց Ռատի մասին ոչ մի տեղեկություն չունենք, իսկ սա պետք է լիներ Լիպարիտի ավագ որդին։ Հիշենք Լիպարիտի գերությունից ազատագրվելու պարագաները։ Հայ պատմագիրները մեզ հաղորդում են, թե Լիպարիտը սելջուկների մոտ, գերության մեջ, այնքան մեծ հեղինակություն էր վայելում, որ Տողրուլ-բեկը

[1] Տե՛ս В. Н. Бенешевич, Трманинские надписи XI века из эпохи византийского владычества (Анийская серия VII), Петербург, 1921, 21—28.

[2] Ա. Լաստիվերցի, գլ. ԺԸ, էջ 124։

[3] Վ. Տոմաշեկ, էջ 41։

[4] Ա. Լաստիվերցի, էջ 125։

[5] Անդ։

[6] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 184։

նույնիսկ առաջարկում էր նրան ընդունել մահմեդականություն և մնալ նրանց մոտ ծառայության մեջ։ Սակայն Լիպարիտի կյանքի վախճանը և նրա առանձին հետաքրքրությունը դավանաբանական խնդիրների հանդեպ՝ ցույց են տալիս, որ նա այն մարդկանցից չէր, որ կարողանար այդքան հեշտությամբ կրոնափոխ լինել և ծառայել մահմեդականներին։ Նա միայն օգտագործեց սելջուկ սուլտանի բարյացակամ վերաբերմունքը և բարեկամությունը՝ Վրաստանում իր դիրքերն ամրապնդելու համար։ Միևնույն ժամանակ, հայտիվ թե սելջուկ սուլտանը բաց թողներ Լիպարիտին միայն փրկանքի դնով, նա պետք է երաշխիք ունենար, որ այս անվտանգ զորավարը, ազատագրվելով, չի դա իրեն դեմ պատերազմելու։ Չէ՞ որ 1048 թվի բյուզանդական դիմադրությունը փաստորեն ղեկավարում էր Լիպարիտը։ Այս դիտողությունները ենթադրել են տալիս, որ Լիպարիտը ազատվեց գերությունից ոչ միայն փրկանքով, ինչպես հայտնվում է Կեդրենոսը, այլև պատանդ տալով իր ավագ որդուն՝ Ռատին։ Ըստ իս՝ պարզվում է, որ սելջուկ ամիրա Աբու-Դինարի առաջնորդը պիտի լիներ «որդին Լիպարտին» Ռատը։ Վերջինս, մնալով սելջուկների մոտ, անշուշտ, մահմեդականություն էր ընդունել և մտել սելջուկների ծառայության մեջ։ Մի շատ սովորական երևույթ այն ժամանակվա համար։

Սելջուկների այս արշավանքը վերջացավ նրանց լիակատար պարտությամբ։ Նրանք ավարով ու գերիներով բեռնված՝ Արածանիի հովտով վերադառնում էին Իրան, Տարոնի սահմաններում՝ սուրբ Կարապետի վանքի մոտ, նրանց ճանապարհը կտրեցին քաջ սասունցիները, որոնց գլխավորում էր Մամիկոնյան իշխանը «զօրաւորն և քաջ որդին Մուշեղայ Թոռնիկ» (մահացած 1071 թ.)։[1] Հանկարծակի եկած սելջուկները կորցնում են ամբողջ ավարն ու գերիները և, ցրտահար լինելով, կենդանի մնացածները փախչում են մազապուրծ։[2]

Տոմաշեկը, անդրադառնալով այս արշավանքին, հակառակ Մատթեոս Ուռհայեցու տեղեկությանը, որ դեպի Մելիտինե արշավող Աբու-Դինարի առաջնորդը Լիպարիտի որդին էր, չփոթում է նախորդ արշավանքի (դեպի Խաղտիք և Ռանեթ) առաջնորդի հետ, որ, ըստ Լաստիվերտցու, էր «յիւրայնոցն» Իվանեի, և գնդում է, թե, «Իվանեի որդիներեն մինը Աբու-Դինարի զորաց առաջնորդն ըլլալով՝ Մելիտինո վրա քալեցաւ»։ Ինչպես տեսանք, Աբու-Դինարի առաջնորդն էր Լիպարիտի մյուս որդին՝ Ռատը, իսկ Իվանեի որդին էր, ըստ երևույթին, նախորդ արշավանքի առաջնորդը։

Մեր ժամանակի բանասերներից մեկը՝ Կոմմագենացին, խոսելով Սեբաստիայում հաստատված Դանիշմանյան տոհմի ծագման խնդրի մասին, հիմնվելով Տոմաշեկի այս սխալ փաստի վրա, հարց է առաջադրում, «արդյոք Խանէի (կարդա Իվանեի) այս անանուն որդին նույն ինքն Դանիշմանդը չէր, որովհետև թե հոր և թե որդվույն նկարագիրներուն և գործերուն համար ըսվածները և թե թվականը քաջապես կը համաձայնին

[1] Մատթէոս Ուռհայեցի, էջ 130։
[2] Տոմաշեկ, էջ 41-42։
[3] Անդ, էջ 41։

Քրքական աղբյուրներու և Միխայել Ասորվո տվիյներուն հետ։ Պրոֆ. Արշակ Ալպոյաճյանը իր Կոմմագենացու հետ (տես «Փիլարտոս Հայրը», հավելված Է-Ը) համաձայնելով, ասում է, թե տրամադիր է Դանիշմանյանների տոհմի հիմնադիրը «նկատելու կրոնափոխ հայ մը կամ վրացի մը»։

Որո՞նք են այն տվյալները, որ հիշյալ հեղինակներին բերում են այս կարծման։ Մեզ հասած աղբյուրների համաձայն, Դանիշմանյան տոհմի նախնայրն է եղել Անձեղ-Թայլու, ծագումով հայ կամ թուրքմեն, և, ինչպես ցույց է տալիս անունը, եղել է վարժապետ (danišmand), հմուտ արաբերենի և պարսկերենի։ Ըստ Կոմմագենացու բերած փաստերի («Փիլարտոս Հայրը», էջ 22), 1050 թ. Աբբասյան էլ-Դային խալիֆից (1031—1075) Անձեղ-Թայլին թույլտվություն էր ստացել Ռումի (բյուզանդական) երկրներում «սրբազան պատերազմ» մղելու և իր նվաճած երկրների իշխանությունը իրեն սեփականելու։ Ենթադրում են, որ Ալփ-Արսլան սուլտանը բարյացակամ է վերաբերվել իր հեջուրին (սենեկապետին)՝ խալիֆի կողմից տրված իրավունքը վավերացրել է։

Միքայել Ասորին հաղորդում է, որ Ալփ-Արսլանի ժամանակ, երբ նրա զորավար Սուլեյմանը պաշարում էր Անտիոքը, «Ամիրայ մի անունն Դանշման, ելաւ ի Թուրքաց եւ եկն եմուտ յերկիրն Կապադովկիացւոց և առ զՍեբաստ և զԿեսարիայ և իշխանացաւ ի վերայ երկրին։ Եւ այս է սկիզբն Դանշմանայ»։ Իսկ Մատթեոս Ուռհայեցին բացորոշ վկայում է, որ նա ծագումով հայ է եղել։ «Յայսմ ամի [1084 թ.], ասում է նա,—մեծաւ Դանիշմանն մեծ ամիրայն Հոռոմոց աշխարհին, որ լեալ էր յազգէն Հայոց, այր բարի և շինող աշխարհի և էր յոյժ ողորմած ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի, եւ եղև սուդ մեծ ի վերայ հաւատացելոցն, որք էին ընդ ձեռամբ Նորայ»[2] Նույնն ասում է նաև Վարգան պատմիչը։

Ուրեմն, հետևելով Կոմմագենացու և Արշակ Ալպոյաճյանի ենթադրությանը և մեր ձեռքի տակ եղած փաստերին, պիտի ենթադրել, որ Լիպարիտի որդի Ռատը, որը 1051 թվին պատանդ էր թողնված սուլտանի մոտ, կրոնափոխ է լինում և դառնում նրա պալատի հեջուբներից (սենեկապետներից) մեկը, իբրև նրա որդիների դաստիարակ՝ վարժապետ, այսինքն «Դանիշմանդ»։ Հետագայում այս «Դանիշմանդ»-Ռատը մասնակցում է սելջուկների արշավանքներին և Սուլեյմանի նման դառնում է մեծ զորավարներից մեկը։ Ալփ-Արսլան սուլտանը 1071 թվին Դանիշմանդ-Ռատին է վերապահում նվաճել Փոքր Հայքը, այն է՝ Երզնկայից մինչև Ալիս գետը տարածվող երկիրը, որը և դառնում է նրա տոհմի՝ Դանիշմանյանների ժառանգական սեփականությունը, իսկ Նիկիսար (Նոր Կեսարիա) քաղաքը՝ նրանց կենտրոնը։ Կոմմագենացին իր ենթադրությունը, որ Դանիշմանյան տոհմի հիմնադիրն էր Իվանեի մահմեդականացած որդին (իսկ ըստ մեր տվյալների՝ Իվանեի եղբայր Ռատը), հավանական է դարձնում նաև հետևյալ

[1] Կոմմագենացի, Փիլարտոս Հայր, Հալէպ, 1930 (հավելված, էջ Ժ)։ Դժբախտաբար այս վերին ասիական կարևոր աշխատությունը մեր ձեռքի տակ չունենք, ուստի ցիտում ենք ըստ Արշակ Ալպոյաճյանի աշխատության. «Պատմություն Հայ Կեսարիոյ» հատ. Ա. Դահիրե, 1937, էջ 486։

[2] Անդ, էջ 485։

[3] Միքայել Ասորի, էջ 399։

[4] Մատթեոս Ուռհայեցի, էջ 997։

նկատառումներով. «Անշուշտ նշանակության արժանի է, դրում է նա, Դանիշմանդի և հայորդիների դրամների վրայի նշանագրերուն երկար ատեն հունատառ ըլլալու պարագան, ինչ որ ամենագործավոր փաստ մը կրնայ համարվիլ անոնց քրիստոնեական ծագում ունենալու վարկածին. Դանիշմանդներու մեկ կողմեն պարսկական և մյուս կողմեն հունական հակումներ ունենալը ավելի վրացական նկարագրի մը պատշաճ կը համարվի քան հայկականի։ «Ինչ որ ալ ըլլա իր ծագումը,—ասում է Արշակ Ալպոյաճյանը, Թուրքման, Հայ կամ Վրացի, համենայն դեպս Ահմետ Տայլու, պետք է անվարան հայտարարենք թե հարկադրանքի տակ թերևս խոլամացող, իր նախկին հավատակիցներուն նկատմամբ բարյացակամ եղած է, թերևս համոզյալ մը չըլլալուն համար։[2]

Մեզ հասել է նաև մի վկայություն, որը ուշադրության չի արժանացել նախորդ երկու բանասերների կողմից. չնայած որ այդ փաստերից օգտվում են այլ կապակցությամբ։ Խոսքս Գոհարինյանց նահատակների վկայարանության մասին է։ Մեր Հայսմավուրքները Հայոց 524 թվականի (1075 թ.) տակ գնում են հետևյալ վկայաբանությունը։ Պատմվում է, որ Մերաստիայում ապրում էր մի հայ իշխան, որը իր անդրանիկ Արև անունով որդու հետ լոնի կերպով ժամեղականացված էր։ Սակայն Դավթի կինը և Արևի մայրը մնացել էր քրիստոնյա և այդ կրոնով էր մեծացրել իր մեացած չորս որդիներին, որոնց անուններն էին՝ «Գոհարմելիք (կամ Գոհարինոս), Ռատիոս (կամ Ռատիկոս), Ծամիդես (կամ Ծամիդոս) և Տունկիոս (կամ Տուքիկոս)։ Սրանք, չափահաս դառնալով, ընդունվում են զինվորական ծառայության մեջ և համարձակ պաշտում են քրիստոնեական կրոնը։ Սակայն շուտով հայտնում են, որ սրանք ժամեղականացած հոր զավակներն են։ Ուստի տեղական իշխանը ստիպեց նրանց պաշտել իրենց հոր և ավագ եղբոր կրոնը՝ ժամեղականությունը, սակայն սրանք կտրուկ կերպով մերժեցին կրոնափոխ լինել, ուստի չարչարանքներից հետո գլխատվեցին։ Սրանց դերեզմանը մինչև վերջերս ցույց էր տրվում Սեբաստիայի Սուրբ Նշան վանքում, որի վրայի արձանագրության տեքստը բերում է Գարեգին եպս. Սրվանձտյանը. «Այս նահատակք որ. կատարեցան սրով վասն Քրիստոսի. Ռատիոս եւ Գոհարինէ, Տնկիկ եւ Ծամիտէս։ Եւ եդան յայստեղոջ ի ձեռն սուրբ վարդապետի Խարսղի. թուա. ՌԼԶ (1187)»։ Այս չորս եղբայրների նահատակության թվագրության հարցում գոյություն ունեն տարբեր կարծիքներ։ Ոմանք առաջարկում են 1136 թվականը, մյուսները՝ 604 = 1155 թ., իսկ ըստ Մաղաքիա արքեպս. Օրմանյանի հաշիվների, ճիշտ թվականը պիտի լինի՝ 1156 թ. հունվարի 28-ը։ Սակայն այստեղ մեզ հետաքրքրողը թվականը չէ, այլ այս չորս նահատակնե-

Գամմաղեանցի, Փիլարաս հայր, հավելված, էջ ժ. Տես՝ Արշակ Ալպոյաճյան, անդ. էջ 486.

[2] Անդ.

[3] Մ. Օրմանյան, Ազգապատում, § 958, էջ 1396—1397։ Գարեգին եպս. Սրվանձտյան, Թորոս Ագրաբ, Ա. էջ 178։ Հ. Ահարոնյան և Հ. Մանանդյան—Հարց նոր վկաների, հատ. Ա. 1908, էջ 19—22։ «Դիւան հայոց պատմ.», հատ. Ժ. էջ 386, 491։ Պայմանագրք, Ի Պոլիս, 1834, Բ. էջ 48.

[4] Թորոս Ագրաբ, Ա. էջ 182—183.

[5] Մ. Օրմանյան, Ազգապատում, § 959, էջ 1397.

րից մեկի անունը «Իստոխուս»։ Հարկավոր է նկատի ունենալ, որ Թատ անվանը (առաջացել է հրաստ անունից)[1] մենք պատահում ենք միայն Լիպարիտյանների տոհմում. իսկ հետո սրանցից առաջացած Կախաբերիձե տոհմում (տիրում էին Արգվեթին ու Ռաճային)։ «Լիպարիտ» և «Թատ» Բաղուաշի-Լիպարիտյան տոհմի սեփական անուններն են և մինչև XIII դարը ոչ մի վրացի կամ հայ իշխանական տոհմում չենք պատահում։ Միայն հետագայում, երբ այս տոհմը դադարել էր գոյություն ունենալուց, Վրաստանում, ապա Հայաստանում, պատահում ենք «Լիպարիտ» անվանը, այն էլ սրանց հաջորդող Օրբելյան տոհմում, իսկ «Թատ» անունը դառնում է շատ հազվագյուտ և գործ է ածվում ոչ վաղ, քան XIII դարի վերջերը, այն էլ միայն Վրաստանում։ Այս բոլորը ենթադրել է տալիս, որ «Թատիոս» «Թատ» անվան հունական ձևն է և հռոմասոր Սեբաստիա կարող էր մուտք գործել միայն և միայն Լիպարիտյան Թատից հետո, որը, ինչպես տեսանք, պիտի լիներ Դանիշմանյանների հարստության հիմնադիր՝ Դանիշման ամիրան (1071—1084)։ Թերևս Գուարինյան վկայությունների մեջ մենք ունենք արձագանքը կրոնափոխության հետ կապված ինչ-որ ընտանեկան դեպքի, որը կարող էր տեղի ունենալ Դանիշման-Թատի ընտանիքում։ Շատ հետաքրքրական հարց, որը կարոտ է հատուկ ուսումնասիրության։

Այժմ նորից անդրադառնանք Իվանե Լիպարիտյանին։ 1058 թվի աշնանը, երբ Թոռնիկ Մամիկոնյանը Սուրբ Կարապետի վանքի մոտ մեծ ջարդ տվեց սելջուկներին, ինչպես երևում է, գրավեց նաև հարևան Արշամունիք և Հաշտյանք գավառները, որտեղ գտնվում էին Իվանե Լիպարիտյանի կալվածները։ Վերջինս, զրկվելով բոլոր այն հողերից, որ պարգևել էր նրան Իսահակ I Կոմնենոս կայսրը, ստիպված է վերադառնալ հայրենիք։

Լիպարիտը՝ այժմ կրոնավոր Անտոնը, հեռավոր Բյուզանդիոնից միջամտում է, որպեսզի Բագրատը ընդունի փախստական Իվանեին և կատարի իր ուխտը—երդումը՝ վերականգնել նրա որդու ժառանգական պատիվները և իրավունքները։ Եվ հիրավի, մի տարուց հետո, երբ Լիպարիտը ըմբոստ Իվանեին վերադարձրեց, Բագրատ IV, չնայած որ տոնում էր իր լրիվ հաղթանակը Լիպարիտյանների հանդեպ, այնուամենայնիվ հարկադրված եղավ ճանաչել Իվանեի ժառանգական իրավունքները և արտոնությունները։ Բագրատը ղեկավարվում էր, անշուշտ, այն սկզբունքով, որ Իվանեն, իբրև կայսրության դավաճան, այլևս հովանավորություն չէր վայելի Բյուզանդիայի կողմից։ Մյուս կողմից, սկսվել էին ծանր օրերը՝ սելջուկների հաճախակի արշավանքները դեպի Հայաստանի խորքերը՝ սպառնում էին արդեն Վրաստանին։ Դեռ հիշողության մեջ թարմ էր Իվանեի որդու առաջնորդությամբ սելջուկների արշավանքը Վրաստանի սահմանամերձ վայրերում, ուստի բացարձակ թշնամական դիրք բռնել Իվանեի հանդեպ, նշանակում էր երկիրը մատնել թշնամու ներխուժման նոր վտանգին, մանավանդ որ Թատը՝ մահմեդականացած Դանիշման ամիրան, կարող էր վրեժ լուծել Բագրատից իր տոհմակիցներին նեղություն պատճառելու համար։

Երբեմն հզոր Բյուզանդիան հետզհետե կորցնում է իր դիրքերը Հայաս-

[1] Տես՝ Justi F., Iranisches Namenbuch. Marburg, 1895, էջ 259, 445։

տանում և Վրաստանում, իսկ սելջուկների ասպատակությունները հասնում էին մինչև Փոքր Ասիայի բյուզանդական պրովինցիաները։

Վերադարձած Իվանեին Բագրատ IV-ը ընդունեց և ճանաչեց նրա ժառանգական իրավունքները։ «Քարթլիի մատյանի» ասելով, Բագրատը «պարգևեց Իվանեին Արգվեթի և Քարթլիի հայրենիքը և [վերջինս] ծառայում էր նրան միամիտ և միարան էր սրա թագավորության թակադների հետ և սպասավոր էր նրա (Բագրատի) շնորհիվ»։[1]

Այժմ թագավորի և Լիպարիտյանների շահերը համընկնում էին։ Իվանե Լիպարիտյանը և Բագրատը իրենց հաշիվներն ունեին Թբիլիսիի ամիրայության և Տաշիր-Ձորագետի Կյուրիկյանների թագավորության հետ. մանավանդ վերջինիս, որը հարավից անմիջապես սահմանակից էր Իվանեի հայրենիքին և սպառնում էր նրան։

Բյուզանդացիների արևելյան քաղաքականության շնորհիվ և սելջուկների արշավանքների հետևանքով ոչնչացվեցին գրեթե բոլոր հայկական թագավորություններն ու իշխանությունները, մնում էին միայն անմատչելի լեռներում ապաստանած, Սյունյաց—Կապանի թագավորությունը և Տաշիր Ձորագետի Կյուրիկյանների թագավորությունը։ Վերջինս Հայ Բագրատունիների միակ օրինավոր ժառանգն էր Շիրակի և Վանանդի թագավորությունների անկումից հետո։ Ինչպես ճիշտ նկատում է պրոֆ. Ե. Ա. Պախոմովը՝ „был момент, когда лоринский царь играл роль главы Армении и притом в то время, когда Анн и другие соседние с его владениями области находились в руках византийцев".[2] Կյուրիկյան թագավորության ներքին և արտաքին քաղաքականության այդ ակտիվացումը առանձնապես նկատելի է դառնում Դավիթ Անհողինի և նրա որդի Կյուրիկե II-ի օրով։ Վերջինս նույնիսկ դրամ է կտրում իր անունով և հովանավորություն է վայելում Բյուզանդիայի կողմից, իբրև մի ուժ, որը կոչված էր հակադրվելու օրեցօր ուժեղացող վրաց-աբխազական պետությանը և սելջուկներին։[3]

Բագրատ IV-ը խնամիական կապերով կապված էր Կյուրիկյանների հետ. իր քույրը՝ Կատան, Կյուրիկե II-ի կինն էր, սակայն այդ ազգակցական կապերը խոչընդոտ չէին հանդիսանում մտածելու միջոցից վերացնելու այդ թագավորությունը, որը նույնպես ձգտում էր տեր դառնալ այնպիսի կարևոր կետին, ինչպիսին էր Թբիլիսին և իր շրջակայքը։ Ինչպես տեսնում ենք, Թբիլիսիի ամիրայության ժառանգության վրա աչք ունեին վրաց-աբխազական թագավորները, Լիպարիտյանները և Կյուրիկյանները։ Սրանց մեջ, իհարկե, վրաց-աբխազական թագավորներն ավելի մեծ իրավունքներ ունեին Թբիլիսին գրավելու։ Նրանք, իբրև միացյալ Վրաստանի թագավորներ, գրավելով ամբողջ Քարթլին, այսինքն «Վրաց աշխարհը», բնականաբար, պիտի ձգտեին նրա կենտրոնը, վրացական վաղեմի մայրաքաղաքը, դարձնել իրենց քաղաքական կենտրոնը։ Լիպարիտյանների ուժը արդեն ջլատված էր և Բագրատ IV-ի համար Թբիլիսիի հարցում

[1] ქართლის ცხოვრება, ანა დედოფლისეული ნუსხა, სიმონ ყაუხჩიშვილის რედაქციით. თბილისი, 1942, 190 (այսուհետև՝ ა. ქ. ც.).

[2] Е. Пахомов, О монете Корикэ куропалата, Известия Кавказского Историко-Археологического Института, том III, Тифлис, 1925, стр. 44—45.

[3] Նույն, passim.

մի՞ակ մրցակիցը կարող էր հանդիսանալ իր փեսա Կյուրիկե II-ը, ուստի սպասում էր հարմար առիթի, որպեսզի նրան ենթարկի իրեն, և այդ առիթը երկար սպասել չտվեց։

1064–1065 թ.թ. տեղի ունեցավ Ալփ-Արսլան սուլտանի առաջին արշավանքը դեպի Վրաստան՝ Ջավախք։ գավառը նեղխուժած թշնամին կոտորեց Ախալքալաքի ազգաբնակությունը։ Բագրատ IV-ը, տեսնելով, որ ինքը իր ուժերով անկարող է դիմադրել թշնամուն, աշխատում է բարեկամական կապեր հաստատել սուլտանի հետ։ Վերջինս, Անիի վրա արշավելուց հետո, Բագրատ IV-ից պահանջում է Կյուրիկե II-ի դուստրը կնության տալ իր քեռորդուն։ Կյուրիկին մերժեց այս առաջարկը, և այս առիթից օգտվեց Բագրատը։ Նա դեսպանի անվան տակ դորքով ուղարկում է իր էրիսթավ Վարազ-Բակուր Գամրեկելի-Թորելուն,[1] որին հաջողվում է Քվեշի պուրակում ձերբակալել Կյուրիկե II-ին և նրա եղբորը՝ Սմբատին։ Բագրատ IV-ը իր ձեռքը գցելով նրանց, ստիպեց իր փեսային, որ սա իր աղջկանը կնության տա Ալփ-Արսլան սուլտանին, ապա մի շարք խոշտանգումներից հետո ստիպեց նրան իրեն հանձնել Կյուրիկյանների ժայրաքաղաքը՝ Սամշվիլդեն։ Այդպիսով՝ Բագրատ IV-ը «գրավեց Սամշվիլդեն, որը միացրեց իր թագավորությանը»։ Բագրատ IV-ի այս արարքը առաջ է բերում Տաշիր-Զորագետի և Կախեթի Կյուրիկյանների անհաշտ թշնամությունը և ատելությունը նրա հանդեպ։ Կյուրիկե II-ը, Սմբատը և Կախեթի Աղսարթան (1058–1084) թագավորները դառնում են Բագրատ IV-ի ժանդարմերիով թշնամիները։ Սրանց միանում է նաև Գանձակի Փագրան ամիրան։ Սրանք միասին օգնում են սելջուկներին ասպատակել Բագրատ IV-ի երկիրը։ Սրանց խրախուսանքով և օգնությամբ Ալփ-Արսլանը 1068 թվականին արշավում է վիրա-ափխազաց թագավորի դեմ, և Վրաստանը դառնում է սելջուկ հրոսակախմբերի ասպարեզ։ Սրանք 1068 թվականի ձմեռը արշավեցին Քարթլիի խորքերը, ավերեցին այն, ապա անցան Լիխի լեռներից հյուսիս գտնվող Արգվեթի գավառը և ասպատակեցին այն մինչև Սվերի բերդը։ «Հաց-ով և գինով» և ամեն բարիքներով ու ազգաբնակությամբ լի երկիրը վեց շաբաթվա ընթացքում ամայացավ և դատարկվեց։ Սաստիկ ձմեռը սուլտան Ալփ-Արսլանին ստիպեց Քարթլիում կարճի դյուղից իջնել դաշտը՝ Շերթուլթա վայրը, որտեղ նա ընդունեց Բագրատ IV-ի դեսպանին։ Վերջինս «դեսպան ուղարկեց սուլտանի մոտ Լիպարիտի որդուն՝ Իվանեին, խաղաղություն հայցելու համար։ Իվանեն, ինչպես տեսանք, դեռևս 1058 թ. ծառայություն էր մատուցել սելջուկներին։ Սուլտանը հենց էր ընկել՝ սաստիկ ձմեռը ստիպեց նրան թողնել Վրաստանը և հեռանալ, ուստի նա ուրախությամբ ընդունեց թագավորի դեսպանին և անմիջապես «վերադարձրեց նրան Ափխազեթ՝ Բագրատի մոտ, պահանջելով նրանից խարաջ և [փոխարենը] խաղաղություն խոստանալով»։ Սակայն դեռ բանակցությունները չվերջացրած, սուլտանը շտապեց

[1] Ս. Թուսելիանի, Գեղարքունիքի ազգագրության նյութերը XII դ. հայերեն ձեռագրերի հիշատակարանների հիման վրա, Հայ ազգագրական ժողովածու, Գ. Գ, Թբիլիսի, 1940, 32.

[2] Հ. Ա. Ա. 102, Հ. Մելիք-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա հատ. 108 էջ։ Հ. Հակոբյան, Հայոց պատմություն, Գ. II, Թբիլիսի, 1914, 147–151 և Մանդալյան, անդ, էջ 34–35։

[3] Հ. Հ. Ա. 103

[4] Անդ.

թողնել Վրաստանը՝ Գանձակի ամիրայության տաք շրջաններում ձմեռելու համար: Գանձակի ամիրա Փադլունին, ի դիմաց նրա ծառայությունների, սուլթանը շնորհում է Թբիլիսի և Ռուսթավի քաղաքները: Տեր դառնալով սրանց,[2] Փադլունը ձգտում է գրավել շրջակա երկրները և առաջին հերթին Քարթլին: Գարնանը Փադլունը ասպատակում է Քարթլիի սահմանները: Բագրատ IV-ը այս ժամանակ գտնվում էր իր ամառանոցներից մեկում՝ Դիդգորում (Թբիլիսիի շրջակայքում), որտեղից Փադլունի դեմ ուղարկում է Լիպարիտի որդուն՝ Իվանեին և այլ դիդեբուլներին ու ազնաուրներին: Վրացական բանակը ջախջախեց Փադլունին, որը հազիվ փրկեց իր անձը՝ ծողոպրելով տասնհինգ ձիավորների հետ միասին, սակայն ի վերջո նա գերի ընկավ Բագրատ IV-ի ձեռքը և վերջինս «էառ ի նմանէ զՏփխիս եւ զԻագ և զԴոզինն, զոր առեալ էին Պարսք ի Հայոց և ի Վրաց»[1]: Այս անգամ Ալփ-Արսլանը միջնորդ դուրս եկավ, և Բագրատը Փադլունի հետ խաղաղության դաշինք կնքեց, ազատեց նրան գերությունից և վերադարձրեց Գանձակը, որի փոխարեն Փադլունը Բագրատին հանձնեց Գագա բերդը իր շրջակայքով: Սա Բագրատ IV-ի խոշոր հաղթանակն էր և միևնույն ժամանակ Լիպարիտյանների կալվածների ազատագրումը թշնամիներից: Այնուհետև Իվանեն վերստին տեր է դառնում իր կալվածներին Արգվեթում և Թրիալեթում, իսկ նրա որդուն՝ Լիպարիտին, Բագրատ IV-ը պարգևում է Ռուսթավի քաղաքը: Ինքը թագավորը իր բնակությունը հաստատում է Սամշվիլդե քաղաքում: Այս արդեն Կյուրիկյանների կատարյալ պարտությունն էր: Տաշիր—Ձորագետի Կյուրիկյանները իրենց քաղաքական կենտրոնը փոխադրում են Լոռի քաղաքը և ձգտում են բարեկամական կապեր հաստատել Ալփ-Արսլանի հետ, և այդ հանգամանքը մի ժամանակ հնարավորություն է տալիս նրանց փրկել իրենց նվաղած պետությունը կործանումից:

Մելիք-Շահ (1072—1092) սուլթանի ժամանակ սելջուկների աշխարհակալությունը հասնում է իր հզորացման գագաթնակետին: Վրաստանն այս շրջանում ժամանակավորապես թուլանում է և վրացի ու հայ Բագրատունիները դառնում են սելջուկների հարկատուներ:

1072 թվին, երբ գահ բարձրացավ Բագրատ IV-ի հաջորդն ու որդին՝ Գեորգի II-ը (1072—1089), երկիրը թուլացել էր սելջուկների արշավանքներից և մի ժամանակ թուլանում է, վրացի Բագրատունիների կենտրոնաձիգ քաղաքականությունը: Նորից ծայր են առնում խոշոր ֆեոդալների փորձերը՝ կենտրոնական իշխանությունը դարձնելու իրենց հլու և կամակատար խաղալիք: Դիդեբուլները, և նրանց մեջ Լիպարիտյանները, բազմիցս ապստամբում են թագավորի դեմ: Գեորգի II-ը տիրող պայմաններում ստիպված աշխատում էր մեղմ միջոցառումներով շահել ըմբոստ իշխանների սիրտը: Դիդեբուլները, օգտվելով նոր թագավորի թուլությունից, 1073 թվին ապստամբում են: Գեորգի II-ը աշխատեց փոխադարձ համաձայնության գալ ապստամբ էրիսթավների հետ: Իվանե Լիպարիտյանին թագավորը պարգևում է Սամշվիլդե քաղաքը և ամբողջ «Վրաց դաշտը», իսկ որդուն՝ Լիպարիտին տալիս է Լոծոբանի ամրոցը Կախեթում, Ռուսթավի փոխարեն, որը նա շնորհում է Կախեթի թագավոր Աղսարթանին: «Քարթլիի մատյանի»

[1] Ջուանշերի՝ Համառոտ պատմութիւն Վրաց, Վենետիկ, 1884, էջ 113—114.

[2] ივ. ჯავახიშვილი, II, 152—156.

ասելով՝ Գեորգի II-ը «պարգևեց Իվանեին Սամշվիլդեն և Իվանեի որդուն՝ Լիպարիտին տվեց Լոռեի բերդը. Ռուսթավի փոխարեն, որը (թագավորը) տվել էր կախեթներին»[1]։

Սակայն Իվանեն նորից է ապստամբում։ Գեորգի II-ը այս անգամ հարկադրված է դիմել կտրուկ միջոցների։ Նա Քութաիսից գալիս է Սամցխե և մեծ բանակով շրջապատում է Սամշվիլդեն։ Նրան օգնության է գալիս Կախեթի թագավոր Աղսարթան Կյուրիկյանը։ Իվանե Լիպարիտյանը փախչում է, ապաստանելով Սոմխիթի լեռները[2]։ Թագավորը Իվանեի որդուն՝ Լիպարիտին, զրկում է Լոռեի ամրոցից, որը վերստին վերադարձնում է Աղսարթանին և ինքը գնում է Ջավախք։ Փախստական Իվանեն շտապում է թագավորի տեսության՝ նրանից ներում ստանալու համար և գալիս է Էկրանթա գյուղը։ Այստեղ հաշտություն է կայանում թագավորի և ըմբոստ վասալի միջև։ Պատմագրի ասելով՝ «ուխտեցին Էկրանթայում, և Իվանեն հաստատվեց Կլդեկարի և Սամշվիլդեի վրա» (დაიფიცნეს თას. დაიმტკიცა ივანე კლდა-კართა და სამშჳლდეს)[3]։

Ուրեմն, 1073 թվից Լիպարիտյանները տիրում են Սամշվիլդեին. սակայն այս դրությունը երկար չի տևում։ Իվանեն ապստամբում է թագավորի դեմ երրորդ անգամ։ «Նա խաբեությամբ խլեց Դագը Գեորգի թագավորի բերդապահներից և ծախեց այն Փադլունին՝ Գանձակի պատրոնին»[4]։ Փադլուն ամիրան, որը զրկվել էր այնպիսի կարևոր ռազմա-ստրատեգիական կետից, ինչպիսին էր Դագը՝ այժմ նորից տեր է դառնում նրան։ Դեպքը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Մելիք-շահ սուլտանը արշավեց դեպի Վրաստան։ Երբ սուլտանի զորքերը երևացին Իվանեի տերության սահմաններում, վերջինս շտապեց հայտնել իր հպատակությունը. «ընդառաջ ուղարկեց Իվանեն իր որդուն՝ Լիպարիտին իբրև պատանդ և այդպիսով կարողանում է խաղաղեցնել սուլտանին»։ Սակայն, Լիպարիտը «մնալով կարճ ժամանակով, գաղտագողի փախավ»։ Զայրացած սուլտանը գալիս՝ «պաշարում է Սամշվիլդեն և առնում է այն, գերի է վերցնում Իվանեին իր կնոջով և թոռով (իմա՝ Ռատին) և բոլոր ազնվականների կանանցով՝ և գրավեց Սամշվիլդեն սուլտանը»[5]։ Սամշվիլդեից սուլտանը իր զորքերն ուղարկում է Քարթլի, որոնք ասպատակում և ավերում են երկիրը։ Մելիք-շահը այնուհետև նվաճում է Գանձակի ամիրայությունը։

Այս դեպքերը տեղի ունեցան 1074 թվին, այսինքն Մանազկերտի 1071 թվի վճռական ճակատամարտից հետո, երբ բյուզանդացիները ստիպված ետ քաշվեցին, թուրք սելջուկներին թողնելով ամբողջ Հայաստանն ու Վրաստանը, որոնք ընկնում են նրանց գերիշխանության ներքո[6]։ Այսպես է վախճանում Իվանեի իշխանությունը։

---

[1] [illegible], 198. տես նաև Լ. Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ, Վրաց աղբյուրները, հ. Ա, էջ 208։

[2] Անդ։

[3] Անդ։

[4] Անդ։ Նույն բառերով չէ պատմում այս դեպքը հայերեն խմբագրության մեջ (Ջուանշեր, 114)՝ «Եւ ապստամբեաց ի նմանէ Իւանէ՝ որդին Լիպարտի. եւ յինքն յանկուցեալ զպահապանս դղեկին Դագայ՝ վաճառեաց զնա դարձեալ տեառն Գանձակայ»։ Տես նաև Լ. Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ, անդ։

[5] Անդ։

[6] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, Երևան, 1922, էջ 38-40։

«Դավիթ արքայից արքայի պատմությանն» հեղինակը ևս ասում է, որ «եկավ սուլտան Մալիք-շա(հ)ը, պաշարեց Սամշվիլդեն և տարավ այն, Լիպարիտի որդի Իվանեին գերի վերցրեց, ավերեց Սոմխիթը և գնաց։ Այնուհետև երկար ժամանակ Սամշվիլդեն և ամբողջ «Վրաց դաշտը» դառնում է սելջուկների կենտրոնավայրերից մեկը, որտեղից նրանք պարբերաբար խուժում են Վրաստանի ու Հայաստանի դավառները և ավերում ու գերեվարում այդ երկրները։ Կուր գետի ամբողջ հովիտը դառնում է վաչկատուն թուրք ցեղերի ձմերոց, իսկ Հայաստանի ալպյան դաշտերը դառնում նրանց ամառային արոտավայրերը։ Թբիլիսի և Սամշվիլդե քաղաքների կառավարությունը Մելիք-շահը հանձնում է իր զորավարներից մեկին Սրահանգ ամիրային։[1] Այնուհետև մենք տեղեկություն չունենք Իվանեի և նրա որդի Լիպարիտի մասին։ Ինչպես տեսանք, Մելիք-շահը Սամշվիլդեն վերցնելուց հետո գերի տարավ Իվանեին իր ընտանիքով, որոնց թվում նաև թոռանը, այսինքն Լիպարիտի որդուն՝ Ռատին։ Լիպարիտը փախչելով Մելիք-շահից, ինչպես երևում է, Սամշվիլդե չի գալիս, այլ թաքնվում է, երևի Կլդեկարնի ամրոցում։ Իրք Իվանեին գերի տարան, Գեորգի II-ը հավանաբար, Լիպարիտին ճանաչում է Արգվեթի և Թրիալեթի էրիսթավ։ Այդ ապացուցվում է ներքոհիշյալ վկայությամբ։ Դավիթ II Շինող թագավորի գահ բարձրանալու պարագաները պատմելիս նրա պատմագրանը հայտնում է, որ «այդ ժամանակները Թրիալեթը և Կլդեկարնի բերդը շրջակա երկրներով ուներ Լիպարիտը և հավատարիմ էր նա Դավիթ թագավորին»։[2] Սրա հետ միասին նույն պատմագիրն ունի հետևյալ վկայությունը. «Դավիթ Շինողի թագավորության չորրորդ տարին՝ 1092 թվին, «ավախճանվեց սուլտան Մալիք-շահը և Լիպարիտ ամիրան սկսեց գնալ իր հայրերի և պապերի ճանապարհով», այսինքն՝ ժառանգում էր աղստամբել թագավորի դեմ և միանալ սելջուկներին։ Մի այլ հատվածը դուցե է տալիս, որ այս Լիպարիտը նույն Լիպարիտյանների տոհմից է և Իվանեի որդին է։ Արդ, հարց է ծագում, թե ինչ պարագաներում է ստացել Լիպարիտը «ամիրա» տիտղոսը։

Մխիթար Այրիվանեցին 1081—1184 թ. թ. միջև հիշատակում է՝ «Թագաւորն Հայոց Կիւրիկէ և Վրաց Գեորգի և կաթուղիկոսն Հայոց տէր Գարսեղ գնացին առ Մելիք-շահ սուլտանն և դարձան պատուով։»[3] Մելիք-շահը ընդունեց Գեորգի II-ին «իբրև սիրելի որդի»[4] և «բոլոր խնդրվածները

[1] ամիսսա ՝ՄԵՄԴԳՈՄԱԴ մոՒՒԻԴա ՝մալիք-ՇԱ՝ մոՒԱԴՁա սամՇՈՒԼԴԵՍ ԴԱ ՎՃՈՒԼՈ. ՒՎԱՆԵ-ԺԻ ԼԻՊԱՐԻՏԻՍԻ, ՏՄՈՒՊ ՄՄ, մոՒԱՄԲՐԱ ՍՈՄԽԻՏՈՒ ԴԱ ՎՃԱՐՒԻԴա. [ՑԽՈՎՐԵԲԱ ՄԵՊՊՈՏ—ՄԵՊՊԻՍԱ ԴԱՎԻՏԻՍԻ], 200.

[2] Հ. Մ ա ն ա ն գ յ ա ն, անգ., էջ 56, ծանոթ.։

[3] ԴԱ մաՏ ՂԱՄԵՐ ՇՈՒՆԱ ՂՈՆԴԵՍ ՏՐԻԱԼԵՏԻ ԴԱ ԿԼԴԵ-ՀԱՄԲԻ ԴԱ մԻՄԴԳՈՄԻ ՄՄԻՍԻ ՂՈՒՊՄԱՆԱ ԼՈՒՊԱՐԻՏՍ, ԴԱ մԵՊՊԵՍԱ ԴԱՎԻՏՍ ՎՃԻՆԱՇՒ ԻՄՄ ՐԵՑԱ ԵՈՏԳՈՒԼԱԴ. Ղ. ՃԱ. Ա. 205.

[4] ԽՄՄՄ ԱՄԱ ՂԻՏԱՐՄԱՆԱՍԻ ՇՈՒՆԱ ԳԱՐԴԱԲԴԱ ԲՈԼՈՒԲԱԴԻ ՄՄՏԲԻ. մՄԿՈՒԴԱ ՍՈՒԼՏԱՆԻ մալիք-ՇԱ ԴԱ ՄԻՄԱՀԱՐԻՄ ԱՄԻՐԱՄԱՆ ՄՎՄՄ ՄԱՄՎԻ ՄԱՄՈՒԼ-ՀԱՀՊՐՏԱ ՃԱԼՏԱ ՍԼՄՂԱ. Անդ.։

[5] Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց. Մոսկվա, 1860, էջ 60։ Սամուէլ Անեցին (Սամուէլի քահանայի Անեցւոյ՝ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, 1893, 118) այս դեպքը դնում է 1078 թվին՝ «ի ՇՀԶ. թվին ի սուլտանն գնացին Հայոց և Վրաց թագաւորքն՝ Կիւրիկէ և Գորգիս։ Նույնը տես՝ Ստեփաննոսի Օրբէլեանի՝ Ժամանակագրութիւն, Երևան, 1942, 18։

[6] [ՑԽՈՎՐԵԲԱ ՄԵՊՊԵՏ-ՄԵՊՊԻՍԱ ԴԱՎԻՏԻՍԻ] Ա. Ղ. ՃԱ, 202.

կտտարեց Գեորգի թագավորին... և թագավորությունը նորա ազատեց տաճկացողներից, ապա տվեց նրան Կախեթը և Հերեթը, սակայն պահանջեց խարաջ նրա թագավորությունից, որը նրանք վերցնում էին բազում ժամանակ»։[1] Ահա այս ժամանակ պետք վերադարձվեին գերի տարված ազնվականները և նրանց ընտանիքները, որոնց թվում նաև Լիպարիտը, որի մասին մենք այլևս տեղեկություն չունենք։ Թվում է, թե նա այս ժամանակ արդեն մահացած էր։ Քանի որ Լիպարիտի և թագավորի շահերն այս ժամանակ մի էին, առաջինը հավատարիմ էր իր պատրոնին։ Անշուշտ, սելջուկների շնորհիվ է, որ այս Լիպարիտը «ամիրայի» տիտղոսն է կրում։ Սովորաբար այդ տիտղոսն էին կրում քաղաքի կառավարիչները, սակայն աղբյուրներից մենք գիտենք, որ ոչ Սամշվիլդեին, ոչ Թբիլիսիին այս ժամանակ Լիպարիտը չէր կարող տիրել.[2] ուստի մնում է ենթադրել, որ «ամիրայի» տիտղոսը սոսկ պատվանուն էր, որ Լիպարիտը ստացած պետք լիներ Մելիք-շահից։ Այս ենթադրությունը հիմնավորվում է ավելի ևս, եթե հիշենք Սամվել Անեցու (էջ 118) հետևյալ հետաքրքրական վկայությունը։ Նրա ասելով՝ «Ի ՇԼԱ (1082) թվին Լիպարիտն տաճիկ եղև»։[3] Ինչպես երևում է, այս կատարվել է Մելիք-շահի դռանը, Սպահանում, որը այնուհետև նրան շնորհել է «ամիրայի» տիտղոսը, իբրև իրեն հավատարիմ ծառայի։ Արժանանալով մեծ պատիվների, Լիպարիտը նորից վերադարձել է հայրենիք։ Ինչպես տեսնում ենք, սա առաջին դեպքը չի, որ Լիպարիտյանները կրոնափոխ են լինում իրենց քաղաքական կարիերայի նպատակով։

Մելիք-շահի մահից հետո «Լիպարիտ ամիրան սկսեց գնալ իր նախնիների՝ հայրերի և պապերի ճանապարհով» և 1093 թվին ապստամբեց Դավիթ Շինողի դեմ, սակայն վերջինս կալանավորեց նրան։ Լիպարիտը ուխտեց, որ հավատարիմ կլինի իր տիրոջը, ուստի թագավորը ազատեց նրան կալանքից, համարելով, որ այս դաս կլինի ըմբոստ ծառայի համար։[4] Սակայն Լիպարիտը 1095 թվին նորից ապստամբեց, և թագավորը նորից կալանավորեց նրան և երկու տարի բանտարկելուց հետո՝ 1097 թվին, արտաքսեց Վրաստանից, ուղարկելով նրան Բյուզանդիա։[5] Թագավորի այս կարուկ միջոցառումները պետք բացատրել ստեղծված ընդհանուր դրությամբ։ Մելիք-շահի մահից հետո սկսվում է սելջուկների աշխարհակալության քայքայումը, որը ավելի ևս խորացավ խաչակրաց արշավանքների շնորհիվ։ «Դավիթ արքայից արքայի պատմության» հեղինակը հաղորդում է, որ. երբ «դուրս եկան փրանգները, վերցրին Երուսաղեմը և Անտիոքը... օգնությամբ Աստուծո շենացավ Քարթլիի երկիրը, Դավիթը հզորացավ, բազմացրեց իր բանակը և դադարեց խարաջ տալ սուլթանին»։ Այնուհետև «թուրքերը այլևս չէին կարող ձմեռել Քարթլիում»։[6] Երուսաղեմը խաչակիրները

[1] Անդ. էջ 203.

[2] Դավիթ արքայից-արքայի պատմագիրը հաղորդում է, որ Դավիթ Շինողի թագավորության առաջին տարիները «Թբիլիսի քաղաքը, Թմոգվը և Սամշվիլդը՝ նամանավանդ Սամշվիլդեն և Ագարանին, թուրքերի ձեռքին էին»։ Անդ. էջ 210։

[3] Տե՛ս նաև Ստեփաննոս Օրբելյանի ժամանակագրությունը, Երևան, 1942 թ., էջ 15։

[4] ქ. ც., 205.

[5] Անդ, 206. Ջուանշեր, էջ 116-117, տես՝ ივ. ჯავახიშვილი, II, 508.

[6] ქ. ც., 206.

վերջին 1097 թվին, որից հետո, ուրեմն, Վրաստանը դադարել էր հարկատու լինել սելջուկներին, դառնալով բոլորովին ինքնուրույն և անկախ։[1]

Դավիթ Շինոդը առաջին հերթին ոչնչացնում է Կախեթի ինքնուրույնությունը՝ միացնելով այն Վրաստանին (1104—1105 թ. թ.)։ Նույն այս ժամանակ, պատմաքանի ասելով՝ «վախճանվեց Ռատը՝ Լիպարիտի որդին, երկվիտ մարդ և իսկապես այսածին։ Այնուհետև պատմագիրը շարունակում է. «Մյսպես կատարվեց Բագվիվաշների տունը, դառնացողների տունը... և ոչ ոք մնաց ժառանգ նրանց ժառանգության, որովհետև բայլեց նրանց նախնիների ամբարշտությունը Աստծու առաջ և նրանց հայրենիքը վերցրեց թագավորը»։[2] Բերած հատվածից մենք իմանում ենք, որ Լիպարիտին աքսորելուց հետո՝ 1097 թվին, նրա ժառանգության տերն է դառնում որդին՝ Ռատը։ Նա երկար չի ապրում, 1105 թվի մոտերքը մահանում է անժառանգ, ուստի թագավորը Լիպարիտյանների ամբողջ կալվածները դրավում է հարքունիս։ «Դավիթ արքայից արքայի պատմության» հեղինակը մի այլ տեղ, այնտեղ, որտեղ նա խոսում է Գելաթի վանքի հիմնադրման մասին, ասում է՝ «Լիպարիտեթ հայրենիքը մնացել էր անժառանգ, ուստի այլ բաղմաթիվ... գյուղերի հետ միասին այն ևս տվեց Գելաթի Տիրամորը, իբրև պաշտոնի տեղեր նրա (թագավորի) բարեխոսների...»։ Ուրեմն՝ թագավորը Լիպարիտյանների երկիրը շնորհել է 1106 թվին հիմնված Գելաթի վանքին և, ինչպես երևում է, կառավարվել է եկեղեցականի կողմից։ Խոսելով Սամշվիլդեն և շրջակա վայրերը 1110 թվին նվաճելու մասին, նույն հեղինակը ժամանակում է, որ մինչև այս ժամանակ՝ «Թրիալեթը և Կլդեկարնի բերդը ուներ ճղոնդիդելի քեռորդին Թեոդորեն։» Լիպարիտյան ժառանգության կառավարիչն էր, ըստ իս, Գեորգի ճղոնդիդելի և ժիգնորարթ-ուխուցեսի քեռորդի Թեոդորեն։ Ո՞վ էր այս Թեոդորեն, արդյո՞ք ազգական էր Լիպարիտյաններին։ 1110 թվին, պատմագրի ասելով՝ «հավաքվեցին Գեորգի ճղոնդիդելի և ժիգնորարթ-ուխուցեսի ժոտ Թեոդորեն, Աբուլեթը և Իվանե Օրբելին, և հարմար ժամանակ գտնելով գողացան Սամշվիլդեն»։[6] Այստեղ արդեն տեսնում ենք, որ գոնե երկուսը սրանցից, Աբուլեթը և Իվանեն, Օրբելիների տոհմիցն են։ Աբուլեթ անվանը պատահում ենք միայն այս տոհմում։ Եթե այս երկուսը մի տոհմից են, պիտի ենթադրել, որ Թեոդորեն ևս նույն Օրբելի տոհմի ներկայացուցիչն է և լինելով հոգևորական՝ հանդես է գալիս իր հոգևոր անունով։ Թերևս սրանք երեքն էլ՝ Թեոդորեն, Աբուլեթը և Իվանեն եղբայրներ են և Գեորգի ճղոնդիդել և ժիգնորարթ-ուխուցեսի քրոջ որդիները։ Ուրեմն, շնորհիվ այդ բարե-

---

[1] ივ. ჯავახიშვილი, II, 509.

[2] მოკუდა რატი, ძე ლიპარიტისი, კაცი ორგული და ნანდილვე ნაშობი იქედნეთა. ეჲ-რეთ დასრულდა სახლი ბაღოვანთა, სახლი განმამწარებელთა:... და არღარავინ ;დაშთა საყოველთა მათთა მკუიდრი, ოამეთუ აიხსნა უსჯულოება მამათა მათთა წინაშე უფლისა, და მამული მათი აღიღო მეფემან. [ცა მეფეთ მეფისა დავითისი], ა. ქ. ცა, 206.

[3] და მამული ლიპარიტეთი უმკუიდროდ დარჩომილ იყო, არამედ სხუათა მრავალთა.. სოფლებთა თანა მისცნა დედასა ღმოთისასა, სამსახურებელნი წინმაშე მდბომელთა მისთათუის,.. *անդ*, 209:

[4] ივ. ჯავახიშვილი II, 536-537.

[5] *Անդ*, 210:

[6] შეკრბეს გიორგი ჯყონდიდლის წინაშე და მწიგნობართა ეტუცესსა თეედორე, აბულეთ და ივანე ორბელი, და სიმარჯუით მოიპარეს სამშუილდე, *անդ*.

կոմսական կապերի, Գեորգի Ճոնղիդել և մծիկնորարթ-ուխուցեսը Գելաթի վանքին շնորհված Լիպարիտյանների կալվածների կառավարիչ է նշանակում Օրբելիների տան ներկայացուցիչներից մեկին, հատկապես հոգևորական կոչում ունեցող Թեգորևին։

1103-04 թվին մծիկնորարթ-ուխուցեսի պաշտոնը Դավիթ Շինողը հանձնում է իր ավագաստ և մտերիմ մարդուն՝ կրոնավոր Գեորգուն,[1] իսկ 1106 թվից, ըստ երևույթին, սա դառնում է նաև Ճոնղիդի ուղղափառ եպիսկոպոս՝ Ճոնղիդելի։ Այս ժամանակվանից սկսած մծիկնորարթ-ուխուցեսի պաշտոնը անբաժան էր Ճոնղիդելի եպիսկոպոսի պատվից՝ Գեորգին՝ իբրև մծիկնորարթ-ուխուցեսի և Ճոնղիդելի, դառնում է պետության «մենաստրատիկ մարդը՝ առաջին վեզիրը»։ Նա էր վարում թագավորության բոլոր գործերը։ Այդ ժամանակ ամիր-սպասալարի պաշտոնը տեղիս գոյություն չուներ, ուստի սա կանգնած էր նաև զորքի գլուխը։[2] Գեորգի մծիկնորարթ-ուխուցեսը և Ճոնղիդելի դեկավարությամբ պատերազմներ էին մղվում սելջուկների դեմ. 1110 թվին նվաճվում է Սամշվիլդեն,[3] 1115 թվին՝ Ռուսթավը։ Իբրև պետության «առաջին վեզիրը», մծիկնորարթ-ուխուցեսը և Ճոնղիդելի Գեորգին դեկավարում էր նաև եկեղեցական գործերը։ Սրա իրավասության տակ էին հատկապես վանքապատկան հողերը։ Մենք տեսանք, որ 1105 թվի մոտերքը, երբ վախճանվեց վերջին Լիպարիտյան Ռատը, իբրև անժառանգ, նրա հայրենիքը՝ «Լիպարիտեթը», թագավորը գրավեց հարքունիս, իսկ մի տարուց հետո՝ 1106 թվին, երբ հիմնվեց Գելաթի վանքը, ի թիվս մյուս հողերի, թագավորը այս վանքին շնորհեց նաև «Լիպարիտեթը»։ Գեորգի մծիկնորարթ-ուխուցեսը այս ժամանակն է, որ ստանում է Ճոնղիդելի պատիվը և, իբրև վանքապատկան կալվածների վերակացու, «Լիպարիտեթի» կառավարիչ է նշանակում իր քեռորդուն՝ կրոնավոր Թեգորևին, որը, ինչպես տեսանք, պիտի լիներ Արուլեթ և Իվանե Օրբելիների եղբայրը։ Սրանց եղբայրը պիտի լիներ մի այլ կրոնավոր՝ Սվիմոնը, որ այս ժամանակ Իեղիել-Ալավերդելին էր, այսինքն՝ Լեղիայի և Ալավերդի եպիսկոպոսական թեմերի պետն էր։[5] Ուշագրավ է, որ 1118 թվին, երբ Գեորգին մահացավ, Դավիթ Շինողը մծիգնորարթ-ուխուցեսությունը շնորհում է նրա քեռորդուն՝ հիշյալ Սվիմոնին, որը 1125 թվից ստանում է նաև Ճոնղիդելի պատիվը։[6] Այստեղից, բնականորեն, հետևում է այն մտքը, որ 1123 թվից, երբ Դավիթ Շինողը պիտի ամիր-սպասալարի պաշտոնի սկիզբը դներ, այդ պատիվը ստացավ Սվիմոնի եղբայրը՝ Իվանեն

[1] Ի. Ջավախիշվիլի, քարտուղարական ինստիտուտ, Ֆոնդ մեկ, ... 1928. 125-126. Ն. Ծերեթելի, Սավախոյ ֆեոդալիզմ Սաքարթվելոյում, Ջյոնդիդել-Մզիգնոբաթ ...ենիս. ...ად. Ს. Մաոիս անվան ... ...ոլտուրայի ինստիտուտի մոամբე, V-VI, Թբիլիսի, 1940, 395-396.

[2] Ակադ. Ի. Ջավախիշվիլին գտնում է այդ 1103—1110 թ. թ. միջև։ Տես նրա վերոհիշյալ աշխատությունը, անդ։

[3] Անդ։

[4] Տես՝ Ի. Ջավախիշվիլի, Քարտուղարական ... Ֆոնդ մեկ, ... 130-131.

[5] Ս. ... 210—211.

[6] Անդ, 211. Ի. Ջավախիշվիլի, II, 512.

[7] Ի. Ջավախիշվիլի, Քարտուղարական ... II, ... 132.

[8] Ն. Ծերեթելի, Սավախոյ ֆեոդալիզմ Սաքարթվելոյում 396-397.

[9] Անդ։ Արդյո՞ք այս Սվիմոնը նույն Արուլեթը չէ։

ամբողջ «Սոմխիթով» ու Սաձվիլդե կենտրոնով հանդերձ, և սա առաջինն է պատմության մեջ, որ կրում է «Օրբելի» տոհմանունը։ Ահա այս Իվանե Օրբելին պիտի լինի Օրբելի—Օրբելյան տան հիմնադիրը։

Ինչպես երևում է, Բագուաշի-Լիպարիտյանները վերանալով Թրիալեթում, Արդվենթում շարունակում են մնալ, հանձին նրանց մի ճյուղի, որը XII—XIII դ. դ. հայտնի ֆեոդալական տուն էր «Նախարարիձե» անունով հայտնի։ Սրանք շարունակում են կրել իրենց նախորդների տոհմական անունները։ Սրանց անվան հետ կապված հուշարձանները գտնվում են Արդվենթի Մղվիժևի գյուղում։ Նախարարիձե տոհմի պատմությունը, որ խնդրատինության հետաքրքրական խնդիր է, դուրս է գալիս սակայն, մեր կողմից առաջադրված հարցի սահմաններից։

Ստորև բերում ենք Բագուաշի-Լիպարիտյան տան առհվածատը։

Լիպարիտ I Բագուաշի

Էրիսթավ Արդվենթի, նստարան է Կացխի գյուղը։ 880 թ. թ. տիրում է նաև Թրիալեթ (Թանգ) դավառին և իր կենտրոնն է դարձնում Կյոնկարնի ամրոցը, Կացխին մնում է իբրև տոհմական ղեկավարանատուն։

Բատ I

Էրիսթավ Թրիալեթի և Արդվենթի. 989 թվից իշխում է միայն Արդվենթում և իշխանանիստ է Կացխի գյուղը։

Լիպարիտ II «Մեծ» Էրիսթավ Արդվենթի—Ցխովրեթայ (հուն. Ζωι

Բատ II
Դիգերուլ Էրիսթավ Արդվենթի, սպանվում է Շիրիմզի հանձնամարտում 1021 թ.

Զվիադ (Իվանե)
(1021—1025) Էրիսթավաց Էրիսթավ Արդվենթի և Թրիալեթի, իշխանանիստ է Կյոնկարնի գյուղը։

Լիպարիտ III Մեծ
Էրիսթավաց Էրիսթավ և մագիստրոս (1026—1058) 1058—1064 թ. թ. կուսակրոն «Անտոն» անունով։

Դատատր։ Վերսինիս որդին Ի. Զարտալանել
Սպանվում է 1048 թ. Բասենի հանձնամարտում։

Բատ-(«Գանիթ-մանդ»?)
Իշխում է Փորբ Հայրում (1071—1084)։

Իվանե.
Էրիսթավաց Էրիսթավ (1059—1074)։

Նիսանիայ
Մահանում է Անիում։

Լիպարիտ IV
Էրիսթավաց-Էրիսթավ, 1082 թ. ընդունում է մահմեդականություն և ստանում է «ամիրա» տիտղոսը (1074-1095)։

Բատ III
Էրիսթավաց-Էրիսթավ (1097—1103)

Անժառանգ Բատ III-ի կալվածքները Դավիթ II Շինողը գրավեց հարյունիս։